Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Բերդի Կ.Մարդանյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց

Թեմա՝ Սովորողի կարողությունների և հմտությունների արգացումն ու կարևորությունը առարկայի դասավանդման շրջանակներում՝ համաձայն նոր ՀՊՉ-ի:

Վերապատրաստող, մենթոր՝ Էմմա Քոսակյան

Ուսուցիչ՝ Անի Մելքումյան

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն……3
Գլուխ 1. ՀՊՉ-ի վերաբերյալ ընդհանուր ակնարկ ……5
1.1 Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված կարողունակությունները……5
1.2 Կարողունակությունները, որպես հանրակրթության նոր չափորոշչի հենասյուններ ……8
1.3 Կարողունակությունների կիրառումը նոր ՀՊՉ-ում……9
Գլուխ 2. Նոր ՀՊՉ-ի գործնական կիրառությունը…. ……11
Եզրակացություն ……14
Գրականության ցանկ ……17
Հավելվածներ ……19

Ներածություն

Հայաստանի Հանրապետության դպրոցներում սովորողների ուսումնառության, տարբեր սոցցանցերում, հասարակության մեջ հաղորդակցման մակարդակի, հեռուստատեսության և ԶԼՄ-երի լեզվի վերլուծությունը վկայում է, որ լեզվական գրագիտության խնդիրը օրեցօր ավելի ու ավելի առաջնահերթ է դառնում: Լեզվական գրագիտությունը համապիտանի կարողունակություն է: Այն լիարժեք դրսևորվում է ոչ միայն բոլոր առարկաների ուսումնական գործընթացում, այլև մեր հասարակության բոլոր ոլորտներում: Շատ հաճախ բազմաթիվ թյուրըմբռնումներ են առաջանում լեզվի ոչ գրագետ կիրառության պատճառով: Լեզվական գրագիտությունը պահանջում է և՛ այնպիսի բառապաշար, որ բառիմաստի շփոթություններ չառաջանան, և՛ պատկերավոր խոսքի տիրապետում՝ լսարան գրավելու և խոսքը ճիշտ տեղ հասցնելու համար, և՛ փաստարկված, հիմնավորված դիրքորոշման դրսևորում՝ ասելիքը անառարկելի մատուցելու կամ առողջ քննարկման դնելու նպատակով:

Լեզվական գրագիտության կարողունակության կարևորության շեշտադրումը կնպաստի, որ այն հանրային պահանջարկ դառնա, և ցանկացած ոլորտում անհատի կայացումը կախված լինի նրանից, թե որքանով է տիրապետում իր մայրենի լեզվին: Նման մոտեցումը պիտի ամենուրեք աչքի ընկնի լեզվական գրագիտության և կարողունակություններ ունեցող շրջանավարտներ կրթելու քաղաքականության շարունակական դրսևորումներով:

Այժմ ամենուրեք փնտրում են արհեստավարժ, բանիմաց և ճշգրիտ խոսք ունեցող մասնագետներ, իսկ արհեստավարժության առաջին ցուցիչը տվյալ ոլորտում կարողունակ լինելն է: Եվ դա ակնառու դրսևորվում է լեզվական գրագիտությամբ: Այն ձևավորվում է տարրական, հիմնական և միջնակարգ կրթության աստիճաններում:

Կարևոր է նշել նաև,որ ըստ Նոր ՀՊՉ-ի, աշխարհագրության հանրակրթական դպրոցի դասընթացները պետք է ներառականության սկզբունքն ապահովելու հնարավորությունն ստեղծեն՝ հիմնված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր սովորողի համար անհատական ուսուցման պլանավորման(ԱՈՒՊ) վրա: Աշխարհագրություն և Հայաստանի աշխարհագրություն դպրոցական առարկաները, լինելով ինտեգրված ուսումնական դասընթացներ, ձևավորվել են բնական և հասարակական օբյեկտների ու համակարգերի տարածական կառուցվածքային միավորների և մարդ-բնություն փոխհարաբերությունների ուսումնասիրության կառուցակարգի վրա, որոնք որոշում են դասընթացի բովանդակության ձևավորման տրամաբանությունը: Դասընթացների բովանդակությունում պետք է առկա լինեն միջառարկայական և վերառարկայական բովանդակության նյութեր՝ պայմանավորված աշխարհագրության հանրային կրթական նշանակությամբ:

Աշխարհագրության դասընթացների կառուցման հիմքում պետք է ընկած լինեն բնության և հասարակության միասնականության, համակարգվածության, մարդու և բնության

փոխկապվածության և <<մարդ-բնություն>> բնահասարակական գեո համակարգի ներդաշնակության գաղափարները: Այս առումով դասընթացները պետ է ունենան որոշակի էկոլոգիական ուղղվածություն, հանրամատչելի ձևով ներկայացնեն տեղական, տարածաշրջանային և համամոլորակային մակարդակներում առկա հասարակական և էկոլոգիական հիմնախնդիրները:

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել սովորողի կարողությունների և հմտությունների զարգացումն ու կարևորությունը առարկայի դասավանդման շրջանակներում՝ համաձայն նոր ՀՊՉ-ի:

Հետազոտական աշխատանքի խնդիրներն են՝

1. Ուսումնասիրել նոր ՀՊՉ-ի վերաբերյալ առկա տեսական նյութերը:

2. << Աշխարհագրություն>> առարկայի շրջանակներում դասավանդումը իրականացնել համաձայն նոր ՀՊՉ-ի ՝ նպաստելով սովորողի կարողությունների և հմտությունների արգացմանը:

3. Կատարել արդյունքների ամփոփում, վերլուծություն և կազմել եզրակացություն;

Հետազոտական աշխատանքի վարկածն է՝

Մենք կարծում ենք, որ առարկայի դասավանդման ընթացքում խիստ կարևոր է սովորողի կարողությունների և հմտությունների արգացումը՝ համաձայն նոր ՀՊՉ-ի:

Հետազոտության ընտրանք՝ 6-րդ, 7-րդ և 8-րդ դասարանների աշակերտներ:

Հետազոտական աշխատանքի մեթոդներն են՝ դիտում, զրույց, քննարկում:

Գլուխ 1. ՀՊՉ-ի վերաբերյալ ընդհանուր ակնարկ

1.1 Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված կարողունակությունները:

Հանրակրթության պետական չափորոշիչը (այսուհետ՝ Չափորոշիչ) ելնում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից և սահմանում է շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները՝ ըստ կրթական աստիճանների (կարողունակություններ (կոմպետենցիաներ) և ըստ կրթական աստիճանների ուսումնառության՝ ակնկալվող վերջնարդյունքներ), ուսումնական բնագավառները, դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջները, հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսումնական պլանի և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքները, սովորողների գնահատման ձևերը, սանդղակը, հաշվառման կարգը:

Կարողունակությունը անհատի համալիր բնութագրիչ է. այն գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների համակարգ է, որը թույլ է տալիս այս կամ այն ոլորտում հաջողությամբ լուծելու որոշակի խնդիրներ: Համաձայն այս սահմանման՝ եթե որևէ մեկը հավակնում է կարողունակ լինել որևէ բնագավառում, ապա նա պետք է տիրապետի այդ բնագավառին բնորոշ որոշակի գիտելիքների, հմուտ լինի այդ բնագավառում որոշակի գործունեություն ծավալելու, պետք է ունենա արժեքային որոշակի համակարգ և կարողանա իր դիրքորոշումն արտահայտել այդ բնագավառի որոշակի հարցադրումների, երևույթների վերաբերյալ:

Ժամանակակից գիտությունը պահանջում է համալիր գիտելիքների կիրառում, որը հիմնված է միջգիտական կարևոր ու պահանջարկված փոխգործակցության վրա: Հանրակրթական դպրոցներին ներկայացվող ժամանակակից պահանջների իրականացումը նոր խնդիրներ է առաջադրում ուսումնական առարկաների դասավանդման ընթացքում: Համակողմանի զարգացած սերունդ ունենալու հանգամանքով պայմանավորված՝ հաճախ դժվար է պատկերացնել խնդրի լուծումը մեկ ուսումնական առարկայի շրջանակներում, ուստի ուսուցման տեսությունում և պրակտիկայում օգտագործում են միջառարկայական ընդհանրացումներ: Դպրոցում դասավանդվող յուրաքանչյուր առարկա սովորողի համար դառնում է ավելի գրավիչ, եթե այն սերտորեն կապվում է բնության, շրջապատող աշխարհի և հասարակական կյանքի հետ: Հանրակրթական դպրոցի գործող ծրագրերում և չափորոշիչներում հատուկ ուշադրությունն է դարձվում ուսումնական գործընթացի այնպիսի կառուցմանը, որը ապահովում է ոչ միայն գիտելիքների ձեռքբերումը, այլ նաև սովորողների մոտ առարկաների, երևույթների ընկալման, վերլուծման, ընդհանրացման գործընթացների ձևավորումը և, ամենակարևորը, գործնականում այդ գիտելիքների կիրառումը: Առավել արդյունավետ է միջառարկայական կապերի

իրականացումն այն դեպքերում, երբ այլ առարկաների ու դասընթացների գիտելիքները ոչ միայն ընդօրինակվում ու կիրառվում են որպես լուսաբանում, այլև գործածվում են որպես սովորողների մտածողության ակտիվացման միջոց, համեմատության ու ուսումնական նյութի ընդհանրացման, վերլուծության նպատակով: Միջառարկայական կապերով ուղեկցվող ուսումնական գործընթացն ունի վառ արտահայտված կիրառական ուղղվածություն, թույլ է տալիս սովորողներին ցուցադրել մի շարք առարկաներից ունեցած իրենց պատկերացումներն ու գիտելիքները, ուստի այդ ամբողջական կիրառությունը բարձրացնում է նաև սովորողների մոտիվացիան:Ուսումնական գործընթացում սովորողների մղումները ձևավորվում են նրանց կարիքների և հետաքրքրությունների հիմքով՝ ուսուցիչը պետք է բոլոր ջանքերն ուղղի սովորողների ճանաչողական 3 հետաքրքրությունների զարգացմանը: Իր կարիքները բավարարելու՝ շփվելու, սովորելու և աշխատելու համար մարդը պետք է ընկալի աշխարհը, ուշադրություն դարձնի գործունեության որոշակի բաղադրիչների վրա, պատկերացնի, թե ինչ է պետք անել, հիշի, մտածի և արտահայտվի: Հետևաբար, առանց ճանաչողական կարողությունների, մարդու գործունեությունը անհնար է: Դասի ընթացքում միջառարկայական կապերի ճիշտ համադրումն ու կիրառումը սովորողին տալիս է հնարավորություն մեկ դասի շրջանակներում ստանալ մի շարք կարողունակություններ, գործնական աշխատանքների ժամանակ կիրառել դրանք, ինչին զուգընթաց զարգանում է նաև սովորողների մետաճանաչողությունը: Այսպիսով, կարող ենք փաստել, որ դպրոցում դասավանդվող բոլոր առարկաներն էլ ունեն իրար լրացնելու և ինտեգրվելու լայն հնարավորություններ, ինչը ուղիղ ազդեցություն կարող է ունենալ սովորողի գիտակցական մակարդակի բարձրացման վրա: Կարող ենք ասել, որ սովորողին անհրաժեշտ մի շարք կարողությունների և հմտությունների՝ այդ թվում նաև մետաճանաչողության զարգացման համար բավականին արդյունավետ միջոց է ուսումնական գործընթացում միջառարկայական կապերի ստեղծումը: Ճանաչողական կարողությունները զարգանում են գործունեության մեջ:



Գծապատկեր 1.

«Կարողունակություն (կոմպետենցիա)» եզրույթը մանկավարժական գրականության մեջ սկսել է շրջանառվել անցած դարի 70-80-ական թվականներից, երբ արևմտյան երկրներում և ԱՄՆ-ում սկսեցին լրջորեն քննադատել կրթության նպատակներն ու բովանդակության ձևավորման մոտեցումները: Արագ փոփոխվող կյանքը, գիտության և տեխնիկայի շարունակական աճը մասնագետներից պահանջում էին աշխատանքային շուկային արագ հարմարվելու ճկունություն: Ամերիկյան հետազոտողները պարզեցին, որ շատ հաճախ մարդկանց ինտելեկտի բարձր աստիճանը մասնագիտական գործունեության ժամանակ մնում է չիրացված: Այդ ժամանակներում լայն տարածված IQ թեստերը, որոնցով չափում էին մարդու իմացական մակարդակը, չէին երաշխավորում նրա մասնագիտական հաջող գործունեությունը: Թեստը տալիս էր բարձր արդյունք, մինչդեռ իրական կյանքում մարդը ցածր արդյունավետությամբ էր աշխատում: Ամերիկացի հետազոտողները կատարեցին բարձր արդյունավետության հասած մարդկանց վարքի, գործունեության ուսումնասիրություններ և արդյունքում ձևակերպեցին նրանց ընդհանրությունները միավորող որակների համալիր խումբ, որն անվանեցին **կոմպետենցիա:**

Այդ ժամանակ արդեն պարզ դարձավ, որ միայն նեղ առարկայական դաշտում գիտելիքների հաղորդումը և հմտությունների ձևավորումը բավարար չէ, այլ անհրաժեշտ է հանրակրթության նպատակների առավել լայն գիտակցում: Հանրակրթական համակարգին նոր պահանջներ սկսեցին թելադրվել գործարար շրջանակներից: Դրա պահանջն առաջացավ հատկապես աշխատանքային շուկայի կառուցվածքի փոփոխությամբ: Պարզ դարձավ, որ հանրակրթությունը պետք է ձևավորի այնպիսի կարողունակություններ, որոնք անհրաժեշտ են յուրաքանչյուր անհատի արագ փոփոխվող հասարակությունում հաջողությամբ կազմակերպելու իր առօրյա կյանքն ու գործունեությունը: 1990-ականների վերջին և 2000-ականների սկզբին առանցքային կարողունակությունների ձևավորմանը նպատակաուղղված կրթական ծրագրեր սկսեցին կառուցել արագ զարգացող նորարարական տնտեսություններ ունեցող այնպիսի երկրներ, ինչպիսիք են Ֆինլանդիան, Ավստրալիան, ԱՄՆ-ի առանձին նահանգներ, Կանադան, Հարավային Կորեան, Շոտլանդիան, Իռլանդիան, Սինգապուրը: Ավելի ուշ այդ շարժմանը միացան Չինաստանը, Ճապոնիան, Գերմանիան, Հոլանդիան, Լատինական Ամերիկայի և հետխորհրդային երկրները: Հետևելով զարգացման ընդհանուր միտումներին՝ յուրաքանչյուր երկիր, ելնելով իր մշակութային, պատմական, սոցիալ-ժողովրդագրական, տնտեսական առանձնահատկություններից, այդ ուղղությամբ շարժվում է իր նախընտրած ճանապարհով:

Չնայած այս հարցում միասնական մոտեցումը բացակայում է, սակայն մի բան հստակ է՝ առանձին առարկաների բովանդակության վրա կառուցված կրթական մոդելն իր դիրքերն արագորեն զիջում է առանցքային կարողունակությունների վրա հիմնված կրթական մոդելին:

Բոլորի համար պարտադիր պահանջների շարքում նեղառարկայական գիտելիքներից և գործնականում դրանք կիրառելու կարողություններից բացի, որոշիչ դեր են սկսում խաղալ համապիտանի կարողունակությունները, որոնք աստիճանաբար դառնում են համընդհանուր գրագիտության պարտադիր բաղադրատարրեր:

Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված կարողունակությունները

2021 թվականին ՀՀ կառավարության կողմից հաստատված Հանրակրթության պետական չափորոշչով սահմանվել են միջնակարգ կրթության հետևյալ ութ կարողունակությունները.

1) լեզվական գրագիտություն և կարողունակություն,

2) սովորել սովորելու կարողունակություն,

3) ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն,

4) ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն,

5) թվային և մեդիա կարողունակություն,

6) մշակութային կարողունակություն,

7) մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն,

8) տնտեսական կարողունակություն:

1.2 Կարողունակությունները, որպես հանրակրթության նոր չափորոշչի հենասյուններ :

Հանրակրթության պետական նոր չափորոշիչի հիմքում ընկած է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումը: Կրթության բովանդակությունը կառուցվում է համաձայն հետևյալ ստորակարգային սխեմայի: Չափորոշչով որպես հանրակրթության գերագույն նպատակ սահմանվել է ութ առանցքային կարողունակությունների ձևավորումը: Այնուհետև ձևակերպվել են դպրոցի տարբեր աստիճանների շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները: Դրանք այն վերջնարդյունքներն են, որոնք կոչված են ձևավորելու առանցքային կարողունակությունները: Որպեսզի այդ վերջնարդյունքները հասանելի լինեն, ձևակերպվել են կրթության բովանդակային դաշտը տրոհող յոթ ուսումնական

բնագավառները, այդ բնագավառները ներկայացնող առարկայացանկերի ձևավորման սկզբունքները, որոնց հիման վրա ներկայացվել է հենքային ուսումնական պլանը, որը ներառում է տարբեր ուսումնական բնագավառներին հատկացվող ժամաքանակների տոկոսային համամասնությունը:

Համաձայն նոր չափորոշչի տրամաբանության՝ դպրոցի տարբեր աստիճանների շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները պիտի ուղենիշ հանդիսանան առանձին առարկաների չափորոշիչների և ծրագրերի մշակման համար, որոնց հիման վրա էլ պետք է ստեղծվեն համապատասխան դասագրքերն ու ուսումնական այլ գրականությունը: Ցանկացած չափորոշիչ փորձում է համակարգել դպրոցում ուսուցանվող գիտելիքը: Համակարգումն ունի երեք հիմնական նպատակ. ա) նույն խմբի կամ գիտելիքի կառուցման միևնույն փիլիսոփայությամբ առարկաներն ապահովել այդ խմբին բնորոշ ուսուցման սկզբունքներով (բուն առարկայական մանկավարժություն, անգլ. subject-specific pedagogy), բ) մասնավորեցնել և փոխկապակցել ակադեմիական «մեծ գիտելիքը» կառավարելի «փոքր գիտելիքի» շրջանակում, գ) որոշ դեպքերում, օրինակ դիպլոմային ծրագրերում, փորձել հավասարակշռել սովորողների ընտրությունը՝ դիպլոմի որևէ մակարդակի համար պարտադրելով համադրել առարկաներ տարբեր գիտակարգերից:

1.3 Կարողունակությունների կիրառումը նոր ՀՊՉ-ում:

Այսօր գիտելիքից բացի սովորողից պահանջվում են մի շարք կարողունակություններ, որոնք թույլ կտան վերջինիս ճիշտ կողմնորոշվել կյանքի ցանկացած իրավիճակում: Անձի համակողմանի զարգացումն իրենից ենթադրում է, որ ցանկացած դժվարություն մարդ կարող է հաղթահարել՝ հենվելով իր իմացական ու գործառական ներուժի վրա: Միջառարկայական կապերի ներգրավումը կարող է բարձրացել ուսուցման գիտականությունը, մատչելիությունը, տալ սովորողին գործնական կարողություններ՝ այդպիսով ապահովելով կրթական չափորոշիչներով սահմանված վերջնարդյունքների բավարարումը: Սովորողը պետք է լինի ճկուն, կարողանա ընտրել, համեմատել, պարզաբանել, հիմնավորել, փաստարկել, հետազոտել ու կշռադատել: Այս ամենն իմանալն ու կարողանալը կնշանակի՝ ունենալ գիտակցական բարձր մակարդակ, ճանաչողական կարողություններ, ինչն էլ այսօր կարևոր է արդի աշխարհում: Ճանաչողական կարողությունները միմյանցից առանձին չեն դրսևորվում, սա մի բարդ համակարգ է, ուստի դրանց զարգացման արդյունավետ ուղիներից մեկը համագործակցային մոտեցումներն են: Օրինակ՝ լեզուների ուսումնասիրության ժամանակ սովորողների մոտ ձևավորվում են բարդ ճանաչողական ունակություններ, որոնք հիմք են դառնում մտածողության, խոսքի և հաղորդակցման հմտությունների ձևավորման համար: Հետագայում մյուս առարկաների ուսուցման ընթացքում այդ լեզվամտածողությունը հիմք է դառնում այլ կարողունակությունների զարգացման: Աշխարհագրությունն էլ սովորողին տալիս է հնարավորություն ճանաչել աշխարհը, մարդուն, այն միջավայրը, որտեղ ինքն ապրում

է: Այսպիսով ցանկացած ուսումնական առարկա փոխլրացնում է մյուսին, դառնում շարունակողը, լրացնողը, ամբողջացնողը: Նորօրյա աշխարհում մեծ նշանակություն ունի առարկաների և գիտությունների համագործակցությունը:

Ուսուցման արդյունավետությունը բարձրանում է ոչ թե մեխանիկորեն սերտած սոսկ փաստացի տեղեկություններով, այլ դրանց համակողմանի վերլուծությամբ: Ուսումնական պրոցեսում այդ վերլուծական արդյունքին կարելի է հասնել, միջառարկայական կապեր ստեղծելու միջոցով: Այդ կապերի ստեղծման արդյունավետ եղանակ է ինտեգրված դասերի անցկացումը: Տարբեր առարկաներից վերցրած բաղադրիչները, որոնք միավորվում են մեկ դասի մեջ, կազմում են մեկ համակարգ, որի շուրջ հավաքվում և մի նոր համակարգ է դառնում ուսումնական նյութը: Որպեսզի ճիշտ ձևով միավորվեն ուսումնական գործընթացի բաղադրիչները, պետք է կատարվեն այնպիսի գործողություններ, որոնք ի սկզբանե ունեն ստեղծագործական բնույթ:

Նշենք նաև, որ դասը պետք է պլանավորել այնպես, որ տվյալ թեման ունենա դաստիարակչական, բարոյական, մարդասիրական, անհատի ձևավորման, բնության նկատմամբ բարեխիղճ վերաբերմունքի, հայրենասիրության զգացումի, մասնագիտության գիտակցված ընտրության կողմնորոշում: Աշխարհի մասին պատկերացումները, բարոյական հայացքները և համոզմունքները, մտածելակերպը և աշխարհայացքը, հետաքրքրությունները, ձգտումները և արժեքները պայմանավորվում են խմբային գիտակցության առանձնահատկություններով, որում անձը ձևավորվում է և որում ընթանում է նրա առօրյա գործունեությունը: Ուստի ուսուցչի շատ կարևոր հանգամանք է, որ դասավանդմանը զուգահեռ ուսուցիչը կարողանա սովորողի մոտ զարգացնել նաև արժեքային համակարգ: Ուսուցման դաստիարակչական ներգործությունն անխուսափելի է, որովհետև սովորողների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Սովորողին դասը հետաքրքիր դարձնելու համար ուսուցիչը հաճախ է դիմում փոխգործուն ուսուցման մեթոդներին:

Ուսուցման փոխներգործուն մոդելն անպայման ենթադրում է ուսուցման գործընթացում ստեղծագործական առաջադրանքների առկայություն, ինչպես նաև պարտադիր շփում աշակերտ-ուսուցիչ համակարգում: Փոխներգործուն մոդելը նպատակ ունի ձևավորել ուսուցման այնպիսի պայմաններ, որոնցում բոլոր սովորողներն ակտիվորեն փոխգործակցում են: Այս մոդելը ենթադրում է նաև կենսական իրավիճակների մոդելավորում, տեղեկատվական հոսքերի ներթափանցում սովորողների գիտակցության մեջ, որոնց շնորհիվ իրականանում է սովորողների ակտիվ գործունեությունը: Փոխներգործուն ուսուցման գլխավոր նպատակը աշակերտի անձի ամբողջական զարգացումն է, իսկ վերջինիս հիմնական միջոցը, որը բացահայտում է անձի ընդունակությունները, իմացական և մտավոր ինքնուրույն գործունեությունն է: Հետևաբար, այստեղից կարելի է եզրակացնել, որ

ուսուցչի գլխավոր խնդիրը դառնում է դասապրոցեսում 10 այնպիսի գործունեության ապահովումը, որը կարող է իրականանալ միայն ժամանակակից փոխներգործուն տեխնոլոգիաների և մեթոդների կիրառմամբ: Վերջիններիս օգնությամբ սովորողն ինքն է բացահայտում դեպի իմացություն տանող ճանապարհը և ձեռք բերված գիտելիքը դառնում է նրա իսկ գործունեության արդյունքը: Այս պարագայում սովորողին տրվում է ավելի շատ հնարավորություն ինքնուրույնություն դրսևորելու և խնդիրների լուծման ճիշտ ու արդյունավետ ուղիները գտնելու: Աշխարհագրությունը, որպես բնահասարակական գիտություն առավել շատ է ընձեռում այս հնարավորությունը Կրթության կարևորությունը գնահատելով՝ պետք է ընդունենք, որ կրթության միջոցով կարելի է հասնել հասարակական մտածողության, հոգևոր-բարոյական և մշակութային արժեքների զարգացման: Ինտեգրված ուսուցումը, ապահովելով տարբեր առարկաների գիտելիքների համակցումը, նպաստելու է հետազոտական հմտությունների, ստեղծագործական կարողությունների ձևավորմանը և դրանց հիմքի վրա նրանց կայուն զարգացման իրականացանը: Այս գործընթացն իրականացնելու լավ հնարավորություն է տալիս աշխարհագրության դասը:

Գլուխ 2. Նոր ՀՊՉ-ի գործնական կիրառությունը

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել սովորողի կարողությունների և հմտությունների զարգացումն ու կարևորությունը առարկայի դասավանդման շրջանակներում՝ համաձայն նոր ՀՊՉ-ի:

Հետազոտական աշխատանքի խնդիրներն են՝

1. Ուսումնասիրել նոր ՀՊՉ-ի վերաբերյալ առկա տեսական նյութերը:

2. << Աշխարհագրություն>> առարկայի շրջանակներում դասավանդումը իրականացնել համաձայն նոր ՀՊՉ-ի ՝ նպաստելով սովորողի կարողությունների և հմտությունների արգացմանը:

3. Կատարել արդյունքների ամփոփում, վերլուծություն և կազմել եզրակացություն;

Հետազոտական աշխատանքի վարկածն է՝

Մենք կարծում ենք, որ առարկայի դասավանդման ընթացքում խիստ կարևոր է սովորողի կարողությունների և հմտությունների արգացումը՝ համաձայն նոր ՀՊՉ-ի:

Նոր ՀՊՉ-ի ծրագրով աշխատում եմ՝ 6-րդ, 7-րդ և 8-րդ դասարաններում:
Հետազոտական աշխատանքի մեթոդներն են՝ դիտում, զրույց, քննարկում:

Ընտրանք՝ 6-րդ, 7-րդ և 8-րդ դասարաններ:

Աշակերտը պետք է կարողանա ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները կիրառել կյանքում հանդիպող տարբեր գործնական խնդիրներ լուծելիս: Գործնական աշխատանքները թույլ են տալիս թուղթ ու գրիչից բացի օգտագործել նաև այլ միջոցներ: Գործնական աշխատանքներ են ուսումնական փորձերն ու լաբորատոր աշխատանքները: Գործնական աշխատանքների հիմնական նպատակներն ու խնդիրներն են.

- ձևավորել և զարգացնել սոցիալական հմտություններ,
- մատուցել կիրառման համար անհրաժեշտ տեսական և գործնական նյութ,
- նպաստել անհատի ինքնադրսևորմանը, կենսագործունեությանը և կրթության,
- հմտությունների շարունակական զարգացմանը:

Գործնական աշխատանքները հիմնականում անցկացվում են 2 ձևով: Առաջին՝ աշակերտը դասընկերների ներկայությամբ կատարում է որոշակի գործնական առաջադրանք, որն ուղեկցվում է բացատրություններով: Մյուս աշակերտները հետևում են բացատրությանը և անհրաժեշտության դեպքում, կատարում համապատասխան շտկումներ կամ մեկնաբանություններ: Երկրորդ՝ սովորողների կարողությունների ու հմտությունների ստուգումը կատարվում է միաժամանակ՝ յուրաքանչյուր աշակերտին տալով անհատական կամ տարբերակված առաջադրանք: Գործնական աշխատանքները գնահատելիս հաշվի են առնվում.

- տրված գործնական առաջադրանքին բնորոշ ընդհանրացումների, գաղափարների ու փաստերի ըմբռնման աստիճանը,
- ստեղծագործական մոտեցումը,
- առաջադրանքի համար անհրաժեշտ հաշվարկներ կատարելու կարողությունը,
- գործողությունների արդյունքները վերլուծելու և հաղորդելու կարողությունը:

Համագործակցային աշխատանք Համագործակցային կամ խմբային աշխատանքը հնարավորություն է տալիս աշակերտներին աշխատել խմբերով՝ բացահայտելու և դրսևորելու իրենց անհատականությունը, համատեղ աշխատանքին մասնակցելու ունակնություն և համագործակցելու կարողությունը: Ուսումնական գործընթացն առավել արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է սովորեցնել սովորել: Համագործակցային ուսուցման դիպուկ բանաձև է Սենեկայի այն միտքը, որ սովորեցնողը սովորում է կրկնակի: Այդ պարագայում, սովորողը երկու դեպքում էլ շահում է. երբ լսում և սովորում է ուրիշից, ինչպես նաև երբ սովորեցնում է ուրիշին: Համագործակցային աշխատանքում պետք է մասնակցեն խմբի բոլոր անդամները, և յուրաքանչյուրը պետք է գիտակցի, որ ընդհանուրի հաջողությունը պայմանավորված է իր մասնակցությամբ իսկ իր հաջողությունը՝ մյուսների: Այդ աշխատանքներից ավելի շատ օգտվում են թույլ աշակերտները, բայց ուժեղներն էլ կշահեն՝ հիմնականում սովորեցնելով: Խմբային աշխատանքը նպաստում է աշակերտի սոցիալականացմանը, մտածողության ճկունացմանը, անձնական որոշ բարդույթներց ազատվելուն, գիտելիքների տրամաբանական մտածողության դրսևորմանը և քաղաքացիական

գիտակցության բարձրացմանը: Կարևոր է, որ աշխատանքի կազմակերպման հիմնական բաղադրիչը խմբի յուրաքանչյուր անդամի մասնակցության խթանումն է առաջադրանքի կատարման ընթացքում: Դասի սկզբում ուսուցիչը հանգամանորեն պետք է ներկայացնի դասի նպատակը, պարզաբանի ուսումնասիրվող նյութի կապն արդեն ծանոթ գաղափարների հետ, որպեսզի աշակերտները պարզ ու հստակ պատկերացնեն, թե իրենցից ինչ է պահանջվում և թե ինչ նպատակների իրագործման են իրենք ձգտելու տրված ժամանակահատվածում: Աշխատանքն ավարտելուց հետո վերլուծվում և քննարկվում էաշխատանքի ընթացքը, և յուրաքանչյուր աշակերտի՝ մասնակցության և ներդրման չափը: Համագործակցային աշխատանքի ավարտից հետո ուսուցիչը կարող է նաև թեստ հանձնարարել, գնահատել և արդյունքները վերլուծելով պարզել յուրաքանչյուր խմբի աշխատանքի արդյունավետությունը:

Եզրակացություն

Նոր չափորոշչում կա ուսումնական նոր բնագավառ՝ «Հայրենագիտություն», որը ևս մեկ հնարավորություն է առաջարկելու լրացուցիչ առարկաներ և միավորելու դրանք մեկ ընդհանուր ուսումնական տրամաբանության շրջանակում: Այլ հարց է՝ լինելու՞ է կամ գոյություն ունի՞ արդյոք «Հայրենագիտություն» ուսուցանելու առանձին տրամաբանություն: Միաժամանակ անհրաժեշտ է, որ ի տարբերություն գործողի՝ նոր չափորոշիչն ու ծրագրերն ունենան ուսումնական բնագավառներով մասնավորեցված ուսուցման սկզբունքներ, այլ կերպ ասած՝ բուն առարկայական մանկավարժություն, որը բխում է այդ ոլորտի ուսուցման հետազոտական վերջին գիտելիքից: Սա կօգնի ուսուցիչներին և սովորողներին հասկանալ գիտելիքի կառուցումն այդ բնագավառներում, փոխկապակցել գիտելիքախմբի տարբեր առարկաները: Սա նաև ուսուցիչների արդյունավետ մասնագիտական զարգացման յոթ պայմաններից մեկն է:

Ցանկացած չափորոշիչ ընտրություն է, որ մշակողներն արել են հիմնվելով այս կամ այն սկզբունքի վրա: Նոր չափորոշիչը տալիս է առարկայական զգալի ազատություն և սահմանում է փոքրաթիվ պարտադիր առարկաներ:

Դրական է, որ

1. ի տարբերություն գործողի՝ նոր չափորոշիչը «նախընտրում» է ոչ թե կոնկրետ ժամաքանակ, այլ միջակայքի հնարավորություն.

2. ֆինանսավորում է ոչ թե կոնկրետ, այլ առավելագույն ժամաքանակները.

3. դպրոցներին ուսումնական բնագավառներից առարկաներ կամ ժամաքանակ ընտրելու զգալի ազատություն է տալիս:

Նոր չափորոշիչը սահմանում է նաև չորս պարտադիր առարկաներ՝ «Հայոց լեզու և գրականություն», «Հայոց պատմություն», «Մաթեմատիկա» և առնվազն մեկ օտար լեզու: Սրանք կարող են ուսուցանվել առանձին կամ ինտեգրված:

Ի տարբերություն գործող չափորոշչի, նոր չափորոշիչը որդեգրում է վերջնարդյունքների ավելի համակարգված մոտեցում՝ ութ կոմպետենցիաների տեսքով: Կոմպետենցիան չափորոշիչը սահմանում է որպես «ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձև», որ հիմնվում է տարբեր առարկաներից ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների վրա: «Լեզվական կոմպետենցիան», օրինակ, լեզուն դիտարկում է որպես «հասարակական կյանքին մասնակցության համապիտանի գործիք», հետևաբար կարևորվում է դրա իմացության այն աստիճանը, որը թույլ կտա այն կիրառել ակադեմիականից մինչ առօրյա շփման մակարդակում:

2. Կոմպետենցիաները մեծ հաշվով նույնական են Եվրոպական հանձնաժողովի ուսումնառության կարողունակությունների հետ, ինչը հեշտացնում է կրթական տարբեր բարեփոխումներով սկսված համապատասխանեցումները եվրոպական կրթական միջավայրին:

3. Նոր չափորոշիչը կարևորում է նախագծային ուսուցումը որպես կրթության կիրառական արդյունք ապահովող գործիք:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է, որ չափորոշիչը բացատրի, թե ինչու է ընտրվել կոմպետենցիոն մոտեցումը և հենց այդ ութ կարողունակությունները, ի՞նչ դեր ունեն կոմպետենցիաները դպրոցական միջավայրի փոփոխության մեջ (բարդ է պատկերացնել, օրինակ, ժողովրդավարության կոմպետենցիան առանց ժողովրդավար դպրոցական միջավայրի), որքա՞նով կամ արդյո՞ք դրանք պիտի մասնավորեցվեն ըստ հայաստանյան միջավայրի կարիքների ու տեսլականի, կամ արդյոք «Լեզվական կարողունակությունը» ենթադրում է նույնական մոտեցում հայոց լեզվի և օտար լեզուների դեպքում: Արդյոք երկու դեպքում էլ, օրինակ, նպատակը «գրավոր և բանավոր կերպով գրագետ հաղորդակցումն» է, թե հայոց լեզվի դեպքում «գրագետ հաղորդակցումը» կարող է կամ պետք է ներառի հավելյալ մասնավորեցում, օրինակ՝ գրաբարի կամ բարբառի ուսուցման տեսքով՝ որպես սեփական/տեղական լեզվական, մշակութային կարողունակության խոր զարգացում:

Ընդհանրական դրական նպատակներից բացի, որոնք ճիշտ են անկախ միջավայրից, չափորոշիչը պետք է անդրադառնա կոնկրետ միջավայրի խնդիրներին և տեսլականին, եթե կրթությունը դիտարկում ենք որպես այդ խնդիրների լուծման և տեսլականի ձգտման միջոց:

1. նոր չափորոշիչը սահմանում է վերջնարդյունքների ավելի պարզ ստորակարգություն՝ ի տարբերություն գործող չափորոշչի. պարզ ասած՝ կան ութ հիմնական նպատակներ և դրանց ուղղված առանձին վերջնարդյունքներ ըստ ուսումնական բնագավառի/կրթական ծրագրի մակարդակի (տարրական, միջին, ավագ).

2. նոր չափորոշիչը շատ ավելի ամփոփ փաստաթուղթ է, ինչը հեշտացնում է դրան ծանոթանալը և այն մտապահելը.

3. նոր չափորոշչում կան գիտելիքի կառուցման մի շարք դրական վերջնարդյունքային պահանջներ:

Առհասարակ բարդ է չափորոշիչ քննարկելը, եթե դրա համար անհրաժեշտ հետազոտական միջավայր չկա: Այստեղ ներկայացվածը առավելապես հետազոտական պատկերացումներից բխող դիտարկումներ են, որոնք չեն ձգտում

նոր չափորոշչի մասին ամբողջական պատկերացում տալու: Նպատակը որոշ կետերի անդրադառնալն է, որոնք առանցքային են չափորոշիչների տեսության շրջանակում:

Նոր չափորոշիչն իսկապես ունի մի շարք դրական բաղադրիչներ համեմատ գործողի: Այն նաև անուղղակիորեն արտահայտված ինչ-որ տեսլական ունի:

Մենք պետք է չափորոշիչն ընկալենք նախ որպես քաղաքական, ապա միայն քաղաքականություն սահմանող տեխնիկական փաստաթուղթ: Չափորոշիչը ենթադրում է ընտրություն, որն արել այն մշակողները: Այն հստակեցնում է, թե ինչ ակնկալել հանրակրթության ոլորտում առաջիկա տարիներին: Սակայն մենք պետք է իմանանք նաև «ինչուն» և «ինչպեսը»՝ գոնե սկզբունքների մակարդակում: Սա չափորոշիների մշակման իսկապես նոր մոտեցում կլինի:

Այս փաստաթուղթը պետք է արձանագրի ոչ միայն ընդհանրական նպատակներ, այլև արձագանքի հասարակության կոնկրետ խնդիրների և նպատակների: Վերջինը, իհարկե, բարդ է միայն ԿԳՄՍ նախարարության շրջանակում պատկերացնելը:

Բացի այդ, ուսուցիչներին չպետք է ընկալել որպես զուտ տեխնիկական փոխանցողներ: Նոր չափորոշիչը կյանքի կոչելու համար, ըստ էության, մասնագիտական զարգացման և շարունակական աջակցության, աշխատանքային պայմանների վերանայման ամբողջովին նոր հայեցակարգ է անհրաժեշտ (վստահ եմ, ԿԳՄՄՆ-ում ևս հասկանում են, որ շաբաթական 22 ժամ դրույքաչափի և ընթացիկ այլ թղթաբանության հետ ձևավորող գնահատումը բարդ է համադրել):

Նոր չափորոշիչը դպրոցներին զգալի ազատություններ է տալիս. կարևոր է բացատրել, սկզբունքների կամ կից հայեցակարգի միջոցով, թե ինչպե՞ս է կատարվելու անցումն ազատական նման միջավայրին՝ հաշվի առնելով հիմնական ռիսկերը: Արդեն 1.5 տարի է, ինչ Տավուշում փորձարկվում են նոր չափորոշիչները և մենք էլ անմասն չմնացինք այդ գործընթացից: Որքան էլ վիճելի փասատաթուղթ էր համարվում ՀՊՉ-ն, մենք ընդունեցինք այն, որպես հնարավորություն յուրաքանչյուր աշակերտի կարողունակությունների զարգացման համար: Նոր մեթոդներով աշխատանքը մեծ հնարավորություն են ստեղծում, որպեսզի մեր աշակերտները հետազոտական աշխատանք կատարեն: Նախագծային աշխատանքը, որը նույնպես նորույթ էր, նպաստում է երեխաների ստեղծագործ մտքին:

Առաջարկություններ

Ինձ համար մի փոքր խնդիր է այն, որ՝ 1-5րդ դասարաններում միավորային գնահատման վերացման շուրջ առկա են որոշակի վերապահումներ: Խնդրային է այն, որ միավորային գնահատում չի կիրառվելու մինչև 5-րդ դասարանի 2-րդ կիսամյակը: Ռիսկային է շուրջ 5 տարի բացառապես առաջնորդվել բնութագրման վրա հիմնված գնահատման մեխանիզմով, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ուսուցչական կազմը դեռևս լիարժեք կերպով չի տիրապետում ձևավորող գնահատման մեթոդներին և գործիքներին: Պետք է ի նկատի ունենալ նաև, որ 4-րդ դասարանը պարտադիր կրթության առաջին մակարդակի ավարտն է և եթե երեխայի գիտելիքներն այս փուլում ճիշտ և ամբողջական կերպող չգնահատվեն, ապա շատ մեծ է հավանականությունը, որ արդյունքում երեխան պարտադիր կրթության հաջորդ մակարդակ կանցնի ոչ լիարժեք գիտելիքներով և կարողություններով:

Տարրական դպրոցի թվային գնահատականների վերացման պարագայում խնդրային է դառնում այդ մակարդակի համար նախատեսված ակնկալվող վերջնարդյունքների չափման հավաստումը/գնահատումը: «Անբավարար» միավորային սանդղակից հրաժարվելու մոտեցումը կարող է էապես լուրջ խնդիր լինել, քանի որ նախագծով նկարագրված չէ, թե փոխարենը ինչ այլ մեխանիզմ՝ ցուցանիշ է սահմանվելու, մշակվելու և ներկայացվելու, որով հնարավոր կլինի բացահայտել և գնահատել՝ արդյոք աշակերտը ձեռք է բերել այս կամ այն գիտելիքը/հմտությունը: Նման մեխանիզմի՝ ցուցանիշի բացակայությունը խնդրային կարող է դառնալ երեխայի առաջադիմության ընդհանուր պատկերի հասկացման, ինչպես նաև սահմանային «վատ» իրավիճակի պարագայում արդյունավետ կանխարգելիչ մեխանիզմների կիրառման տեսանկյունից: Իհարկե նաև ձերբազատվում ենք նաև, այն փաստից, որ ցածր գնահատականը երբեմն օգտագործվում է շատերի կողմից, որպես դաստիարակչական գործիք:

Իհարկե իմ կարծիքով, գնահատականը չպետք է լինի երեխայի սովորելու մոտիվացիա, սակայն ներկայիս կրթական համակարգում այն խաղում է շատ մեծ դեր: Եվ ներկայիս իրավիճակում անբավարար միավորային շեմից կտրուկ հրաժարվելը կարող է հանգեցնել երեխաների սովորելու մոտիվացիայի մակարդակի նվազեցմանը: Անհրաժեշտ է գնահատել անբավարար թվանշանի վերացման ազդեցությունը նաև այն աշակերտների վրա, որոնք ստանում են ցածր դրական թվանշաններ: Այդ աշակերտներն այսօր ջանքեր են գործադրում «անբավարար» թվանշան չստանալու համար: Եթե վերացվի «անբավարար» թվանշանը, ապա մեծ է ռիսկը, որ այս երեխաների սովորելու մոտիվացիան անկում կարձանագրի: Եթե «2»-ի, «3»-ի ու «4»-ի միջև տարբերություն չկա և չեն լինելու դրանից բխող բացասական հետևանքներ, ապա ինչո՞ւ ջանք գործադրել: Դպրոցում աշխատող ուսուցիչները կվկայեն, որ «անբավարար» թվանշան չստանալը մոտիվացնում է որոշ սովորողների ինչ-որ բան ձեռնարկելու: <<Մշակութային կարողունակություն - Սովորողները ճանաչում են հայ

մշակույթն ու մարդկային քաղաքակրթությունների մշակութային բաղադրիչները՝ որպես մարդկային զգացմունքների և գործողությունների կողմնորոշիչներ: Նրանք արժևորում են սեփական ինքնությունը, ընտանիքի, համայնքի և պետության դերը, ունեն Հայաստանի աշխարհագրության, հասարակական-քաղաքական համակարգի և պատմության հիմնարար իմացություն: Աշակերտները ձևավորում են սեփական նախասիրություններ ազգային և համաշխարհային մշակութային ժամանակաշրջանների ուսումնասիրության ընթացքում: Նրանք ի վիճակի են զարգացնել սեփական մշակութային ու գեղագիտական պատկերացումները՝ արժևորելով հոգևոր և նյութական ժառանգությունն ու մշակութային բազմազանությունը, ճանաչելով հայ և համաշխարհային գրականությունն ու արվեստը և ձևավորելով մշակութային գրագիտություն և ճաշակ>>: Այս կետը, շատ կարևոր բաղադրիչ է, հատկապես աշխարհագրություն առարկայում, երբ ուսումնասիրում ենք ՀՀ-ն, աշակերտները իրենց բնակավայրի մշակութային վայրերին, բնական լանդշաֆտներին, ճարտարապետական կոթողներին: Յուրաքանչյուր ազգ պարտավոր է ճանաչել իր էթնիկական ծագումը, մշակույթը և ավանդույթները: Կարևոր է *կիրառել* քարտեզներ տեղեկություններ ստանալու համար:

Գրականության ցանկ

1.Դասի պլանավորում և գնահատում /Ջինի Լ. Սթիլ, Քուրթիս Ս. Մերեդիթ և Չարլզ Թեմփլ / Պատրաստված «Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով» ծրագրի համար:

2.. Ուսուցիչների վերապատրաստման գործընթացի կատարելագործումը, Մելանյա Աստվածատրյան, Անահիտ Արնաուդյան, Իզաբելա Օհանովա,

3.<<Աշխարհագրություն>> եվ <<Հայաստանի աշխարհագրություն>> ուսումնական առարկաների չափորոշիչներ և օրինակելի ծրագրեր:

4. Исаева Т. Е., Пубаник А. Н., Становление компетентностного подхода в ведущих зарубежных странах. conf. teacher@rgups.ru

5. Универсальные компетентности и новая грамотность: от лозунгов к реальности. М.: Изд. дом ВШЭ, 2020.

ԱՅՌԵՔՍ ԵՐԵՎԱՆ 2003թ.

6. www.e-draft.am

7. lib.armedu.am